ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«Զվարթնոց» օդանավակայան, Երևան 0042, ՀՀ, Հեռ.՝ (37410) 593-030, Ֆաքս՝ (37410) 285-345, էլ. փոստ՝ gdca@aviation.am

N 1.4/13.1/1004-17

«18» 05 2017 թ.

«ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԵՆ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Համաձայն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության /այսուհետ Գլխավոր վարչություն/ և «Սենտրալ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Վաճառող/ միջև 01.02.2017 թվականին կնքված N ՀՀ ՔԱԳՎ-ՇՀԱՊՁԲ-15/6-17/6 ծածկագրով պետական գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/՝ Ձեր կողմից պետք է մատակարարվեր ավտոմեքենաների անիվներ՝ համաձայն Պայմանագրի 1.1 կետի, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածի:

12.05.2017թ. թիվ 1.4/13.1/970-17 գրությունով Ձեզ տեղեկացվել էր, որ մինչև 18.05.2017թ. համապատասխան անվադողերը չմատակարարվելու դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծվի:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը 2017 թվականի մայիսի 18-ից միակողմանի լուծել է 01.02.2017 թվականին կնքված N ՀՀ ՔԱԳՎ-ՇՀԱՊՁԲ-15/6-17/6 գնման պայմանագիրը:

Տեղեկացնում ենք նաև, որ սույն ծանուցումն ստանալուց հետո Դուք պարտավոր եք 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900013207023 հաշվեհամարին մատակարարման ժամկետների խախտման համար (N ՀՀ ՔԱԳՎ-ՇՀԱՊՁԲ-15/6-17/6 պայմանագրի 7.2 կետի համաձայն) փոխանցել 4444 (չորս հազար չորս հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ որպես տույժ:

Վերոգրյալով պայմանավորված՝ ներկայացնում եմ Ձեզ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը, որը սահմանված կարգով հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
DEPARTMENT OF CIVIL AVIATION AT THE GOVERNMENT OF THE RA
GENERAL SECTION
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐ Է
ELECTRONIC SIGNATURE IS VALID

ԱՐՍԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ